Եվրոպայի խորհրդի լանդշաֆտային կոնվենցիա

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մանկավարժական գրքույկ

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Եվրոպայի խորհրդի լանդշաֆտային կոնվենցիա

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մանկավարժական գրքույկ

COUNCIL OF EUROPE LANDSCAPE CONVENTION
CONVENTION DU CONSEIL DE L'EUROPE SUR LE PAYSAGE

Եվրոպայի խորհուրդ

Ֆրանսերեն հրատարակություն՝
Activités d'éducation au paysage pour l'école primaire – Livret pédagogique
ISBN 978-92-871-8665-2

Սույն աշխատության մեջ արտահայտված կարծիքները հեղինակ(ներ) ինն են և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական

քաղաքականությունը: Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն հրատարակության որևէ հատված չի կարող թարգմանվել, վերարտադրվել կամ տարածվել որևէ ձևով կամ միջոցով՝ էլեկտրոնային (լազերային կրիչ, համացանց և այլն) կամ մեխանիկական, այդ թվում՝ պատճենահանման, ձայնագրման կամ տեղեկատվության պահպանման կամ տարածման որևէ համակարգի միջոցով՝ առանց Եվրոպայի խորհրդի Հաղորդակցությունների գծով տնօրինության կողմից նախապես տրված գրավոր թույլտվության (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int): Կազմը և էջադրումը՝ Փաստաթղթերի

և հրապարակումների հրատարակման դեպարտամենտ (ՓՀՀԴ), Եվրոպայի խորհուրդ

1-16, 18-24 գործողությունների պատկերները՝ Ռոզալինա Պենա Վիլայի

17-րդ գործողության պատկերը՝ Գ. Ֆերնանդես Թաթիեյի

Գործողությունների լուսանկարները՝ Մարիա դել Թուրա Բովե Պլա, Ժորդի Ռիբա Վիլա, Ռոզալինա Պենա

Վիլա, Մարթա Թրավե Սանչես

Կազմի լուսանկարը՝ Ջիան Պաոլո Բարդացցայի, Արևաածաղիկ

Եվրոպայի խորհրդի
հրատարակչություն
F-67075 Strasbourg Cedex
http://book.coe.int
ISBN 978-92-871-8828-1

© Եվրոպայի խորհուրդ , 2021
Տպագրված է Եվրոպայի խորհրդում

Եվրոպայի խորհրդի
Լանդշաֆտի կոնվենցիայի

Եվրոպական տարածական պլանավորման և լանդշաֆտի վերաբերյալ շարք, 2021, թիվ 121

Խմբագրական տնօրեն՝
Մագելոն Դեժան Պո

Սյուզան Մոլերի և Էվա Նագիի
հետ համագործակցությամբ

www.coe.int/en/web/landscape

Բովանդակություն

Նախաբան 5

Ներածություն 9

1. Լանդշաֆտի ընկալման գործողություններ 11

Գործողություն 1. Լանդշաֆտը տեսնելը 12

Գործողություն 2. Լանդշաֆտը ունկնդրելը 14

Գործողություն 3. Լանդշաֆտը շոշափելը 16

Գործողություն 4. Լանդշաֆտը հոտոտելը 18

Գործողություն 5. Լանդշաֆտը համտեսելը 20

Գործողություն 6. Լանդշաֆտն զգալը 22

2. Լանդշաֆտի նույնականացման գործողություններ 25

Գործողություն 7. Ի՞նչ է դա 26

Գործողություն 8. Արդյո՞ք դա այն է, ինչ թվում է 28

Գործողություն 9. Տարբեր, բայց նման 30

Գործողություն 10. Նույնիսկ ավելի դժվար 32

Գործողություն 11. Մոտ թե հեռու 34

3. Լանդշաֆտի վերլուծության գործողություններ 37

Գործողություն 12. Բույսերի աճ 38

Գործողություն 13. Կենդանիների հետքեր 40

Գործողություն 14. Մարդկային հետք 42

Գործողություն 15. Ի՞նչ է կատարվում այստեղ 44

Գործողություն 16. Ի՞նչն է ձևավորվում առաջին հերթին 46

Գործողություն 17. Լանդշաֆտի կախարդանքը 48

4. Լանդշաֆտի արտացոլման գործողություններ 51

Գործողություն 18. Պլանավորել տարածքը 52

Գործողություն 19. Ձեր կարծիքով ի՞նչ տեղի կունենա, եթե... 54

Գործողություն 20. Որոշումը ձերն է 56

5. Լանդշաֆտի հաշվետվության գործողություններ 59

Գործողություն 21. Լանդշաֆտային ուղի 60

Գործողություն 22. Մեր լանդշաֆտը 62

Գործողություն 23. Իմ լանդշաֆտի ալբոմը 64

Գործողություն 24. Իմ լանդշաֆտն այսպիսին է 66

Եզրակացություն 69

Նախաբան

Մարդը ոչինչ է առանց լանդշաֆտի

Խոսե Օրտեգա ի Գասեթ

Եվրոպայի խորհրդի Լանդշաֆտի կոնվենցիայի (ԵՊԾ թիվ 176) կիրառվում է անդամ պետությունների ողջ տարածքի համար և ընդգրկում է բնական, գյուղական, քաղաքային և քաղաքամերձ տարածքները: Այն ներառում է հողային, ջրային և ծովային տարածքները և վերաբերում է ինչպես առանձնահատուկ լանդշաֆտներին, այնպես էլ սովորական և ետընթաց զարգացող տարածքներին:

Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է «օրենքով ճանաչել լանդշաֆտները՝ որպես մարդկանց կենսամիջավայրի էական բաղադրիչ, մշակութային և բնական ընդհանուր ժառանգության բազմազանության արտահայտություն և դրանց ինքնության հիմք»:

Կոնվենցիայում նշվում է, որ լանդշաֆտը կարևոր դեր ունի հասարակության շահերում մշակույթի, բնապահպանության, շրջակա միջավայրի ու սոցիալական ոլորտներում և հանդիսանում է տնտեսական գործունեության զարգացմանը նպաստող ռեսուրս, որի պահպանությունը, կառավարումն ու պլանավորումը կարող են նպաստել տեղական մշակույթների և նոր աշխատատեղերի ստեղծմանը: Այն ընդգծում է լանդշաֆտի՝ ամենուրեք մարդկանց կյանքի որակի կարևոր բաղկացուցիչ մաս հանդիսանալը, ինչպես նաև անհատական ու սոցիալական բարեկեցության առանցքային տարրը: Լանդշաֆտի «պահպանումը, կառավարումն ու պլանավորումը իրավունքներ և պարտականություններ են առաջացնում յուրաքանչյուրի համար» (Կոնվենցիայի նախաբան):

Կոնվենցիայի նպատակների համար (Հոդված 1).

- «Լանդշաֆտ» նշանակում է մարդու կողմից ընկալվող տարածք, որի բնույթը բնական և (կամ) մարդկային գործոնների ազդեցության կամ փոխազդեցության արդյունք է,
- «Լանդշաֆտային քաղաքականություն» նշանակում է իրավասու իշխանությունների կողմից ընդհանուր սկզբունքների, ռազմավարությունների և հանձնարարականների արտահայտում, որը թույլ կտա իրականացնել միջոցառումներ՝ ուղղված լանդշաֆտների պահպանմանը, կառավարմանը և պլանավորմանը,
- «Լանդշաֆտի որակի նպատակ» նշանակում է շրջակա միջավայրի վերաբերյալ հասարակության ձգտումների վրա հիմնված և իրավասու մարմինների կողմից հատուկ լանդշաֆտի առանձնահատկությունների վերաբերյալ ձևակերպումներ,
- «Լանդշաֆտի պահպանություն» նշանակում է լանդշաֆտի էական կամ առանձնահատուկ հատկանիշների պահպանությանն ուղղված գործունեություն՝ պայմանավորված բնական և (կամ)

մարդկային գործունեության արդյունք հանդիսացող ժառանգության արժեքավորմամբ,

- «Լանդշաֆտի կառավարում» նշանակում է կայուն զարգացման հեռանկարներն ապահովող և սոցիալական, տնտեսական և այլ միջավայրային գործընթացներով պայմանավորված՝ լանդշաֆտի վրա ազդող փոփոխությունների ներդաշնակեցմանն ու կարգավորմանն ուղղված հետևողական գործունեություն,
- «Լանդշաֆտի պլանավորում» նշանակում է ուժեղ կանխորոշող գործողություն՝ ուղղված լանդշաֆտի զարգացմանը, վերականգնմանը կամ կարգավորմանը:

Կոնվենցիայով յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է բարձրացնել քաղաքացիական հասարակության, մասնավոր կազմակերպությունների և իշխանության մարմինների իրազեկվածությունը լանդշաֆտի արժեքի, դերի և փոփոխությունների վերաբերյալ: Այսպիսով, նրանք պարտավորվում են խրախուսել՝

- մասնագետների պատրաստումը՝ լանդշաֆտի գնահատման և այլ գործառույթներով զբաղվելու համար,
- լանդշաֆտային քաղաքականության, լանդշաֆտի պահպանության, կառավարման ու պլանավորման բազմաառարկայական (մուլտիդիսցիպլինար) ծրագրերի մշակումը մասնավոր և պետական հատվածների մասնագետների և շահագրգիռ խմբերի ուսուցման համար,
- դպրոցական և համալսարանական դասընթացների նախապատրաստումը, որոնք համապատասխան առարկաների միջոցով բացահայտում են լանդշաֆտների արժեքը և հիմնախնդիրները՝ կապված դրանց պահպանության, կառավարման և պլանավորման հետ:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2015)7 հանձնարարականն անդամ պետություններին՝ տարրական դպրոցներում լանդշաֆտի վերաբերյալ կրթության համար նախատեսված մանկավարժական նյութերի մասին, մշակվել է Եվրոպայի խորհրդի լանդշաֆտի և կրթության հարցերով աշխատանքային խմբի կատարած աշխատանքի հիման վրա, որը ներկայացվել է Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիային նվիրված ԵԽ համաժողովում (Ստրասբուրգ, 18-20 մարտի 2015 թ.), իսկ այնուհետև Եվրոպայի խորհրդի մշակույթի, ժառանգության և լանդշաֆտի հարցերով ղեկավար կոմիտեի նիստում (Ստրասբուրգ, 1-3 հունիսի 2015 թ.): Աշխատանքային խմբի կազմում էին Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրականացման համար պատասխանատու ազգային ներկայացուցիչներ, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի կրթության քաղաքականության և պրակտիկայի հարցերով ղեկավար կոմիտեի ներկայացուցիչը: Աշխատանքային փաստաթղթերը մշակել են Եվրոպայի խորհրդի փորձագետներ՝ Բարսելոնայի համալսարանի (Իսպանիա) աշխարհագրության և պատմության ֆակուլտետի պրոֆեսորներ և հետազոտողներ տկն. Մարիա դել Թուրա Բովե Պլան, պրն. Ժորդի Ռիբա Վիլան և Ռոզալինա Պենա Վիլան, CDCPP (2015) Add. 15՝ Ջենովայի համալսարանի (Իտալիա) լանդշաֆտային ճարտարապետության գծով պրոֆեսոր տկն. Անալիսա Կալկանյո Մանիգլիոյի հետ համագործակցությամբ:

Սույն աշխատանքին աջակցություն են ցուցաբերել Անդորայի շրջակա միջավայրի, գյուղատնտեսության և կայուն զարգացման նախարարությունը, Ֆինլանդիայի շրջակա միջավայրի նախարարությունը, Ֆրանսիայի կայուն զարգացման և էներգետիկայի նախարարությունը, Նորվեգիայի տեղական ինքնակառավարման և արդիականացման նախարարությունը, Սերբիայի շրջակա միջավայրի պահպանության նախարարությունը և Շվեյցարիայի շրջակա միջավայրի դաշնային գերատեսչությունը:

«Լանդշաֆտային կրթություն տարրական դպրոցների համար» մանկավարժական գրքույկը ներկայացնում է կատարված աշխատանքների ամփոփ նկարագիրը: Գրքույկը պատրաստել է ԵԽ լանդշաֆտի, շրջակա միջավայրի եւ հիմնական վտանգների դեպարտամենտի ղեկավար տիկին Մագելան Դեյան Պոն, վարչական գծով օգնական Սյուզան Մոլլերը՝ Օդեսայի համալսարանի (Ուկրաինա) իրավաբան Վերոնիկա Ստրեյլեցի, գիտության եւ միջազգային հարաբերությունների ոլորտի (Ֆրանսիա) քաղաքական փորձագետներ Աուրելի Դ. Մաջելդիի եւ տիկին Բենեդիկտ Բլոդո Մարի Բաթչերի աջակցությամբ:

«Եվրոպայի խորհուրդը շնորհակալություն է հայտնում տիկին Նունե Պետրոսյանին, պարոն Արման Հարությունյանին և պարոն Դավիթ Եպիսկոպոսյանին սույն հրատարակության թարգմանության վերանայման համար»:

Գրքույկում ներկայացված գործողությունները կարող են իրականացվել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության շրջանակներում: Դրանք կարող են խթանել աշակերտների հետաքրքրությունը և ակտիվ ներգրավվածությունը լանդշաֆտի բազմաթիվ ոլորտներում:

Մագելոն Դեժան Պո
Եվրոպայի խորհրդի լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի
գործադիր քարտուղար

Ներածություն

Նպատակ

Լանդշաֆտի վերաբերյալ կրթության նպատակն է խթանել աշակերտների հետաքրքրասիրությունը և հետաքրքրությունը լանդշաֆտի նկատմամբ՝ առաջարկելով նրանց՝

- մտածել, թե ինչ են ընկալում «լանդշաֆտ» ասելով՝ դա այն վայրն է, որտեղ իրենք ապրում են, թե՞ մի այլ վայր է,
- դիտարկել լանդշաֆտն իր միջավայրային, սոցիալական, մշակութային և տնտեսական ասպեկտներով ինչպես տարածության, այնպես էլ ժամանակի մեջ,
- հասկանալ, որ լանդշաֆտի բնույթը բնական և (կամ) մարդկային գործոնների ազդեցության կամ փոխազդեցության արդյունք է,
- դիտարկել լանդշաֆտը որպես մշտապես զարգացող բաց համակարգ,
- հասկանալ լանդշաֆտի պահպանության, կառավարման և պլանավորման մարտահրավերները,
- հաշվի առնել շահագրգիռ կողմերի և բնակչության կողմից լանդշաֆտին վերապահված առանձնահատուկ արժեքները,
- պատկերացնել, թե ինչ դեր կարող են նրանք ունենալ որպես անհատներ և հասարակության անդամներ լանդշաֆտի կայուն և ներդաշնակ զարգացումը խթանելու տեսանկյունից:

Մեթոդ

Գործողությունները վերաբերում են մի շարք թեմաների և կարող են իրականացվել միջառարկայական եղանակով: Դրանք կարող են վերաբերել լանդշաֆտի ցանկացած տեսակի (բնական, կիսաբնական, գյուղական, քաղաքային կամ քաղաքամերձ)՝ մոտակա կամ հեռու: Դրանք կարող են լինել «ամենօրյա» լանդշաֆտներ, նշանավոր համարվող լանդշաֆտներ կամ դեգրադացված լանդշաֆտներ:

Գործողությունները կարող են իրականացվել դպրոցի տարածքում կամ վերջինիս տարածքից դուրս: Աշակերտները հատկապես մոտիվացվում են դրսում կազմակերպվող գործողություններին մասնակցելիս: Նրանք կարող են նաև աշխատել մեդիա գրադարաններում և հետազոտություններ կատարել:

Գործողությունները նախատեսված են ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար: Աշակերտների ընտանիքների անդամների

կամ այլ անձանց մասնակցությունը հաճախ նպաստում է քննարկումների հարստացմանը և միջսերնդային հարաբերությունների ամրապնդմանը:

Գործողությունները տեղի են ունենում կրթական հինգ փուլով՝ լանդշաֆտի ընկալման, լանդշաֆտի նույնացման, լանդշաֆտի վերլուծության, լանդշաֆտի արտացոլման և լանդշաֆտի զեկուցման գործողություններ:

Որոշ գործողություններ ներառում են ավանդական խաղեր: Ուսուցիչները կարող են դրանք համապատասխանեցնել այն համատեքստին, որում վերջիններս անցկացվում են:

1. Լանդշաֆտի ընկալման գործողություններ

Լանդշաֆտի ընկալման գործողությունների նպատակն է հասկանալ լանդշաֆտը զգացումների, մտքերի և հույզերի միջոցով:

Նպատակներ

- Դիտարկել ինչպես բնական, այնպես էլ մարդու միջամտության արդյունքում ստեղծված լանդշաֆտի նշանակալի կամ բնորոշ հատկանիշները:
- Քննարկել լանդշաֆտի կիրառելիության և ներդաշնակության հարցերը:
- Լանդշաֆտը համարել կենդանի միջավայր, ոգեշնչման և ստեղծարարության աղբյուր:

Խորհուրդներ

- Ապահովել դպրոցի տարածքում և վերջինիս տարածքից դուրս իրականացվող գործողությունների շարունակականությունը:
- Տրամադրել բավարար ժամանակ անհատական աշխատանքի իրականացման համար նախքան խմբային աշխատանքին անցնելը:

Գործողություն 1. Լանդշաֆտը տեսնելը

Նպատակ

Ընկալել լանդշաֆտը տեսնելու միջոցով

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Նախընտրելի է դրսում կամ դասարանում:

Երբ

Օրվա ընթացքում:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

20-ից 60 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Դրսում՝ տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ: Դասարանում՝ լանդշաֆտների պատկերների հավաքածու (լուսանկարներ, գծապատկերներ, նկարներ):

Ինչպես

Դրսում աշակերտներն անցնում են հատուկ ընտրված ճանապարհով և միաժամանակ հետազոտում լանդշաֆտի ձևերն ու գույները: Նրանք հստակեցնում են լանդշաֆտի ձևերը (լեռների ուրվապատկերներ, քաղաքներ, դաշտերի երկրաչափություն, գյուղական հողակտորների ձևեր, գետերի ոլորաններ, ճանապարհներ, այգիների արահետներ, ափագծեր, լճեր և այլն): Նրանք նկարում են լանդշաֆտը՝ վերարտադրելով դիտարկված ձևերը և երանգները:

Դասարանում աշակերտներն ուսումնասիրում են լանդշաֆտների պատկերները, տեսնելու՝ արդյոք համանման ձև ու գույն ունեցող լանդշաֆտներն իրականում նման են, թե տարբեր: Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Տեսողությունը հնարավոր է դարձնում տարբերակել բազմազան կառուցվածքով եւ դինամիկայով լանդշաֆտները՝ ըստ դրանց ձեւերի եւ գույների:

Պայծառությունը փոփոխվում է՝ կախված օրվա ժամից եւ եղանակից:

Լանդշաֆտի սկզբնական գեղագիտական տպավորությունից հետո հնարավոր է բացահայտել դրա բազմաթիվ ասպեկտները:

Գործողություն 2. Լանդշաֆտը ունկնդրելը

Նպատակ

Ընկալել լանդշաֆտը լսելու միջոցով:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Նախընտրելի է դրսում, կամ դասարանում:

Երբ

Դրսում, օրվա ընթացքում (պետք է ուշադրություն դարձնել, որպեսզի ձայները և աղմուկները լսելի լինեն): Դասարանում, օրվա ընթացքում:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են ինքնուրույն և խմբերով:

Տևողություն

20-ից 60 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Դրսում՝ տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ: Դասարանում՝ լանդշաֆտների ձայների և աղմուկների ձայնագրություններ և այդ լանդշաֆտների պատկերները (լուսանկարներ, գծապատկերներ, նկարներ):

Ինչպես

Դրսում աշակերտներն անցնում են հստակ ընտրված ճանապարհով (կանգ առնելով և ունկնդրելով), որտեղ լսվում են ձայներ և աղմուկներ (սովորաբար դրանք փոփոխվում են՝ կախված սեզոնից և օրվա ժամից): Փակելով աչքերը, նրանք լուռ հաշվում են լսելի ձայների և աղմուկների քանակը և մտապահում: Նրանք ձայնագրում են դրանք՝ լանդշաֆտի «ձայնապատկերը» ստանալու համար: Նրանք նկարում են լանդշաֆտը, որպեսզի կարողանան հիշել այն:

Դասարանում աշակերտները լսում են տարբեր լանդշաֆտների ձայների և աղմուկների ձայնագրությունները: Նրանք նշումներ են կատարում լսածի հիման վրա և նկարում այն լանդշաֆտը, որոնք իրենց պատկերացման մեջ արթնացնում են այդ ձայներն ու աղմուկները: Նրանք ստուգում են, թե արդյո՞ք այդ ձայներն ու աղմուկները սովորաբար կարելի է լսել որոշակի լանդշաֆտներում, և մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Լսելու միջոցով տեղեկություններ ենք ստանում լանդշաֆտի մասին: Եթե աղմուկը հեշտ լսելի է, ապա միայն ուշադիր ունկնդրելով կարելի է տարբերակել որոշակի ձայներ:

Լանդշաֆտի ձայնապատկերը ձայների և աղմուկների համադրություն է, որը բնորոշում է շրջակա միջավայրը: Յուրաքանչյուր լանդշաֆտ ունի իր ուրույն ձայնապատկերը:

Սովորաբար, լանդշաֆտից բխող հիմնական ձայները և աղմուկները ցույց են տալիս դրա բնույթը:



Գործողություն 3. Լանդշաֆտը շոշափելը

Նպատակ

Ընկալել լանդշաֆտը շոշափելու միջոցով:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դրսում և դասարանում:

Երբ

Օրվա ընթացքում:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են ինքնուրույն և խմբերով:

Տևողություն

25-ից 60 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Անթափանց պարկեր (լանդշաֆտի տարրեր հավաքելու համար), աչքերը կապելու համար շարֆեր, ստվարաթղթե տուփ (վրան կտրած անցքով), բնական և մարդու միջամտության արդյունքում առաջացած տարրերի նմուշներ:

Ինչպես

Դրսում աշակերտներն անցնում են հստակ ընտրված ճանապարհով, որտեղ հավաքում են բնական (տերևներ, կեղև, մամուռ, քարաքոս, խճաքար, ավազ, խեցիներ) և մարդու միջամտության արդյունքում առաջացած (շշի կափարիչ, թուղթ, պոլիէթիլենային տոպրակ) տարրերի նմուշներ:

Վերադառնալով դասարան՝ աշակերտներն այդ նմուշները տեղադրում են ստվարաթղթե տուփի մեջ: Նրանք հերթով, աչքերը կապած, ձեռքը մտցնում են տուփի մեջ և վերցնում նմուշները: Նրանք փորձում են ճանաչել տարրերը, պատկերացնել դրանց ծագման վայրը (սոճու կոնը կարող է լինել անտառից, մամուռը՝ խոնավ փայտից, մանրախիճը՝ արահետից, խեցիները՝ ծովափից) և բացատրել՝ ինչու են դրանք այդպիսին: Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Բնական տարրերի, պինդ (հող, քար), հեղուկ (ջուր) կամ գազային (օդ) մարմինների հետ շփումը տեղեկություններ է հաղորդում լանդշաֆտի մասին:

Լանդշաֆտի տարրերի նյութակազմվածքը, ձևը և ջերմաստիճանը ձևավորում են լանդշաֆտը:



Գործողություն 4. Լանդշաֆտը հոտոտելը

Նպատակ

Ընկալել լանդշաֆտը հոտի միջոցով:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Նախընտրելի է դրսում կամ դասարանում:

Երբ

Օրվա ընթացքում:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

30-ից 60 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ:

Ինչպես

Դրսում աշակերտներն անցնում են հստակ ընտրված ճանապարհով, որտեղ փորձում են որսալ թե՛ հաճելի և թե՛ տհաճ հոտեր: Նրանք իրենց տետրերում գծում են անցած ճանապարհը՝ նշելով այն տեղերը, որտեղ հայտնաբերել են այս կամ այն հոտը (պատկերելով տարբեր գույներով): Նրանք նկարագրում են հոտերը, ապա համեմատում այլ հոտերի հետ: Նրանք նշում են, թե արդյո՞ք առկա են տեղանքին ոչ բնորոշ հոտեր (անտառում աղտոտման հոտ) և իրենց համար դժվա՞ր է պարզել դրանց աղբյուրը (ցնդող օրգանական միացություններ): Նրանք ստուգում են, թե արդյոք այդ հոտերն ավելի ուժեղ են արտահայտվում շոգ ժամանակ:

Եթե հոտը (տհաճ կամ հաճելի) ուժեղ է, ապա աղբյուրը հեշտ կլինի բացահայտել (գոմաղբի հոտը կարող է գալ գոմից, քիմիական նյութերի հոտը՝ գործարանից, լճացած ջրի հոտը՝ ջրամբարից, սննդի հոտը՝ հասարակական սննդի վայրից, ձկան հոտը՝ ձկնորսական նավահանգստից, բույսերի բույրերը, ծովափնյա օդը և այլն):

Դասարանում աշակերտները մեկնաբանում են իրենց աշխատանքը և պատկերացնում, թե ինչպես կարելի է վերացնել որոշ տհաճ հոտեր և ուժեղացնել այլ՝ հաճելի հոտերը (բուրավետ բույսեր): Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Հոտերն ազդում են լանդշաֆտի ընկալման վրա ինչպես դրական, այնպես էլ բացասական կերպով:

Հոտառական հիշողությունը կարևոր դեր է խաղում կյանքում, իսկ հոտերը հաճախ ասոցացվում են լանդշաֆտների հետ:

Գեղեցիկ լանդշաֆտները դառնում են նվազ գրավիչ, եթե համեմված են տհաճ հոտերով:

Գործողություն 5. Լանդշաֆտը համտեսելը

Նպատակ

Ընկալել լանդշաֆտը համի միջոցով:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Նախընտրելի է դրսում կամ դասարանում:

Երբ

Օրվա ընթացքում:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

20-ից 60 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Լանդշաֆտների պատկերներ (լուսանկարներ, գծապատկերներ կամ նկարներ), սնունդ (հում, եփած, պատրաստի ուտեստներ), ափսեներ, սկուտեղներ, աչքակապեր, տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ:

Ինչպես

Դրսում աշակերտներն անցնում են հստակ ընտրված ճանապարհով, որտեղ փորձում են գտնել ուտելի վայրի բույսեր, ծաղիկներ, մրգեր կամ մշակովի մրգեր և բանջարեղեն:

Դրսում կամ դասարանում աշակերտներն ասոցացնում են/նմանեցնում են համերը լանդշաֆտների հետ (որոնք կարող են լինել մոտ կամ ավելի հեռու): Սնունդը համտեսելուց հետո նրանք պատկերացնում են, թե որ լանդշաֆտից այն կարող է լինել (բանջարեղենը կարող է լինել շուկայական բանջարանոցից, ձուկը՝ ծովից, հատապտուղը՝ լեռնային շրջանից, միսը՝ ֆերմայից, միրգը՝ այգուց, հացահատիկը՝ դաշտից) և ինչու (հողի տեսակը, կլիման, աճեցման եղանակները): Նրանք կարող են կրկնել վարժությունը կապած աչքերով: Իրենց պատկերացմամբ նրանք նկարում են «համտեսած» լանդշաֆտները և մասնակցում ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Համի ընկալումն անհատական բնույթ է կրում: Ոմանց կարող է դուր գալ սնունդը, մյուսներին՝ ոչ:

Տեղանքի որակի վերաբերյալ ավանդական կամ ժամանակակից գիտելիքների վրա հիմնված գյուղատնտեսությունը թույլ է տալիս արտադրել որակյալ սնունդ՝ միաժամանակ կայուն կերպով պահպանելով լանդշաֆտը:

Գործողություն 6. Լանդշաֆտն զգալը

Նպատակ

Ընկալել լանդշաֆտը մտքերի և հույզերի միջոցով:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

նախընտրելի է դրսում կամ դասարանում:

Երբ

Օրվա ընթացքում:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

20-ից 45 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Դրսում՝ քարտեզ, տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ, հույզերի արտահայտման սանդղակ: Դասարանում՝ լանդշաֆտների պատկերներ (լուսանկարներ, գծապատկերներ կամ նկարներ), հույզերի արտահայտման սանդղակ:

Ինչպես

Դրսում աշակերտներն անցնում են լանդշաֆտով՝ նշելով իրենց ճանապարհը և դիտարկման կետերը քարտեզի վրա: Նրանք լուռ քայլում են՝ կենտրոնացնելով իրենց մտքերը և հույզերը: Նրանք կատարում են նշումներ և ներկայացնում իրենց հույզերը պատկերակներով: Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Դասարանում աշակերտներն ընտրում են լանդշաֆտների պատկերներ: Նրանք նկարագրում են դրանք և փնտրում այդ լանդշաֆտների հետ ասոցացվող ձայնագրություններ, բնական և մարդու միջամտության արդյունքում ծագած տարրերի նմուշներ, հոտեր և սնունդ: Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Թեև լանդշաֆտը կարող է տարբեր մտքեր և հույզեր հարուցել տարբեր մարդկանց մոտ, հիմնականում այն համանման մտքեր և հույզեր է առաջացնում:

Բացի այդ, լանդշաֆտի ընկալումը կարող է տարբեր լինել՝ կախված նրանից, թե այն իրականում է դիտարկվում, թե՝ վիրտուալ տիրույթում:



2. Լանդշաֆտի նույնականացման գործողություններ

Լանդշաֆտի նույնականացման գործողությունների նպատակն է նկարագրել և դասակարգել լանդշաֆտը՝ հաշվի առնելով դրա էական և առանձնահատուկ հատկանիշները:

Նպատակներ

- Հաշվի առնել մասշտաբը լանդշաֆտի առանձնահատուկ հատկանիշների պատկերման ժամանակ, գնահատել դրանց համամասնությունները և հասկանալ, թե ինչպես են դրանք համադրվում:
- Ուսումնասիրել լանդշաֆտի կառուցվածքը՝ հասկանալու, թե ինչպես է այն գործառնում:
- Ուսումնասիրել լանդշաֆտի նշանակալից և բնորոշ հատկանիշները:

Խորհուրդներ

- Բացահայտել տարածքներ, որոնք կարող են համարվել ամենօրյա, ուշագրավ և դեգրադացված:
- Դիտարկել լանդշաֆտների բազմազանությունը տարբեր մակարդակներում (տեղական, տարածքային, ազգային, մայրցամաքային, համաշխարհային):
- Համեմատել լանդշաֆտները՝ բնորոշեու նմանություններն ու տարբերությունները:

Գործողություն 7. Ի՞նչ է դա

Նպատակ

Բացահայտել լանդշաֆտի բնական (աբիոտիկ/անկենդան և բիոտիկ/կենդանի) և մարդու միջամտության արդյունքում ծագած հատկանիշները:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դրսում կամ դասարանում:

Երբ

Դրսում՝ նախընտրելի է առավոտյան: Դասարանում՝ օրվա ընթացքում:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

20-ից 30 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Լանդշաֆտի պատկերներ (լուսանկարներ, գծապատկերներ, նկարներ), պատճենման գծագրաթուղթ, տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ:

Ինչպես

Դրսում աշակերտները նկարում են լանդշաֆտի առանձնահատկությունները՝ օգտագործելով միայն երեք գույն, մեկը՝ բնական աբիոտիկ հատկանիշների, մյուսը՝ բնական բիոտիկ հատկանիշների և երրորդը՝ մարդու միջամտության արդյունքում ծագած տարրերի համար: Նրանք նաև կարող են օգտագործել պատկերակներ (քառակուսի, շրջան և եռանկյունի՝ կախված այն հանգամանքից, թե հատկանիշներն աբիոտիկ են, բիոտիկ թե մարդու միջամտության արդյունք): Նրանք շարունակում են գործողությունը՝ հաշվելով յուրաքանչյուր կատեգորիայի համար նկարված հատկանիշների թիվը: Նրանք ուսումնասիրում են հատկանիշների յուրաքանչյուր տեսակի զբաղեցրած տեղը և մասնակցում ընդհանուր քննարկմանը:

Դասարանում աշակերտներն դիտարկում են լանդշաֆտի պատկեր: Նրանք նշում են մի շարք հատկանիշներ (աբիոտիկ, բիոտիկ և մարդու միջամտության արգասիք) երեք առանձին պատճենման գծագրաթղթերի վրա: Այնուհետև

իրար վրա են դարսում այդ երեք թերթը՝ լանդշաֆտն իր բոլոր տարրերով որպես մեկ ամբողջություն պատկերացնելու համար: Նրանք շարունակում են գործողությունը՝ հաշվելով ըստ կատեգորիայի նկարված հատկանիշների թիվը: Նրանք ուսումնասիրում են հատկանիշների յուրաքանչյուր տեսակի զբաղեցրած տեղը և մասնակցում ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Լանդշաֆտի կառուցվածքը բաղկացած է բնական (աբիոտիկ և բիոտիկ), ինչպես նաև մարդու միջամտության արդյունքում ծագած տարրերից:

Ըստ իր գերակշռող հատկանիշների՝ լանդշաֆտը կարող է համարվել բնական, կիսաբնական, գյուղական, քաղաքային կամ քաղաքամերձ:



Գործողություն 8. Արդյո՞ք դա այն է, ինչ թվում է

Նպատակ

Դիտարկել լանդշաֆտի բնույթը, որն առաջացել է բնական և մարդկային գործոնների ազդեցության և փոխազդեցության արդյունքում:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դրսում կամ դասարանում:

Երբ

Դրսում՝ նախընտրելի է առավոտյան: Դասարանում՝ օրվա ընթացքում:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

20-ից 30 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Դրսում՝ տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ, ճանապարհի քարտեզ (որի վրա նշված են դիտակետերը): Դասարանում՝ լանդշաֆտի պատկերներ (լուսանկարներ, գծապատկերներ, նկարներ), տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ:

Ինչպես

Դրսում աշակերտներն անցնում են հստակ ընտրված ուղիով, որտեղ դիտարկում են, թե արդյո՞ք լանդշաֆտի բնույթը բնական գործոնների (վայրի բույսերի աճ, բնական աղբյուրից բխող հոսանքներ) կամ մարդու միջամտության (մշակաբույսերի դաշտ, ուրբանիզացված շրջան, ջրանցքով գետ) ազդեցության արդյունք է: Նրանք ուսումնասիրում են այդ գործոնների փոխազդեցությունը (քարե հուշարձանը ծածկող բույսեր, գետի ափերին տնկած ծառուղի, լողափի էրոզիայի դեմ պայքարի համար թափված ավազ): Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Դասարանում աշակերտներն իրականացնում են նույն գործողությունը լանդշաֆտների պատկերների հիման վրա: Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Լանդշաֆտը բարդ համակարգ է, քանի որ հանդիսանում է բնական և մարդկային գործոնների ազդեցության արդյունք:

Լանդշաֆտը դինամիկ է, քանի որ հանդիսանում է այդ գործոնների միջև փոխազեցության արդյունք:



Գործողություն 9. Տարբեր, բայց նման

Նպատակ

Դիտարկել, որ լանդշաֆտները կարող են տարբերվել իրենց տեսքով, սակայն նման լինել իրենց գործառնության ձևով:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դրսում կամ դասարանում:

Երբ

Դրսում՝ նախընտրելի է առավոտյան: Դասարանում՝ օրվա ընթացքում:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես կամ խմբերով:

Տևողություն

30-ից 120 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Դրսում՝ տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ, ճանապարհի քարտեզ (որի վրա նշված են դիտակետերը): Դասարանում՝ լանդշաֆտների պատկերներ (լուսանկարներ, գծապատկերներ, նկարներ), տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ:

Ինչպես

Դրսում կամ դասարանում աշակերտներն ուսումնասիրում են, թե արդյոք նույնատիպ լանդշաֆտներն ունեն ընդհանուր առմամբ համադրելի գործառնության ձև, նույնիսկ եթե դրանք աշխարհագրորեն հեռու են (քաղաքային լանդշաֆտներ՝ շենքեր, վարչական շենքեր, գրասենյակներ, պուրակներ. գյուղական լանդշաֆտներ՝ մարգագետիններ, դաշտեր, առանձին տներ. ափամերձ լանդշաֆտներ՝ ավազ, ավազաթմբեր, ճահճուտներ. լեռնային բնապատկերներ՝ տեղագրություն, ռելիեֆ. արևադարձային լանդշաֆտներ՝ խիտ բուսականություն. արդյունաբերական լանդշաֆտներ՝ հանգարներ, գործարաններ, հանքեր. անապատային լանդշաֆտներ՝ ավազ, օազիս): Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Առօրյա կյանքում կարելի է տեսնել տարատեսակ լանդշաֆտներ՝ հաշվի առնելով դրանց հիմնական բնութագրերը:

Լանդշաֆտները կարող են տարբերվել իրենց տեսքով, սակայն ունենալ գործառնության նույն ձևը:

Գործողություն 10. Նույնիսկ ավելի դժվար

Նպատակ

Դասակարգել բարդ լանդշաֆտները, որոնք կազմված են դրանց բնական և մարդու միջամտության արդյունք հանդիսացող հատկանիշների համադրությունից:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դրսում կամ դասարանում:

Երբ

Դրսում՝ նախընտրելի է առավոտյան: Դասարանում՝ օրվա ընթացքում:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

30-ից 120 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Դրսում՝ տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ, ճանապարհի քարտեզ (որի վրա նշված են դիտակետերը): Դասարանում՝ լանդշաֆտների պատկերներ (լուսանկարներ, գծապատկերներ, նկարներ), տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ:

Ինչպես

Դրսում աշակերտներն անցնում են այնպիսի մի ուղիով, որտեղ կարող են տեսնել բարդ լանդշաֆտների մեծ բազմազանություն, որոնք կազմված են դրանց բնական և մարդու միջամտության արդյունք հանդիսացող հատկանիշների համադրությունից: Նրանք ուսումնասիրում են, թե արդյո՞ք կան որոշակի գերակշռող հատկանիշներ, բացահայտում են առավել ցայտուն կողմերը, նկարագրում եւ դասակարգում են լանդշաֆտը: Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Դասարանում աշակերտներն իրականացնում են նույն գործողությունը՝ սկսելով բարդ լանդշաֆտների պատկերներից (տեղական կամ հեռավոր): Նրանք նկարագրում են լանդշաֆտները, բացահայտում առավել ցայտուն կողմերը, դասակարգում են դրանք և մասնակցում ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Սովորաբար, այն լանդշաֆտները, որոնց բնական և մարդկային էական կամ առանձնահատուկ հատկանիշները քիչ են փոփոխվում և ենթակա չեն ուժեղ փոխակերպման գործոնների (բնական կամ մարդկային), հեշտ է դասակարգել:

Միաժամանակ, տարբեր բնական և մարդածին հատկանիշներով օժտված լանդշաֆտները, որոնք ենթակա են փոխակերպման գործոնների (բնական կամ մարդկային), բարդ են, և դրանք դժվար է դասակարգել:

Այն լանդշաֆտները, որոնց գերակշռող կողմերն առանձնապես բազմազան չեն, կարող են տարբեր կերպ դասակարգվել՝ կախված դրանց ընկալումից:

Գործողություն 11. Մոտ թե հեռու

Նպատակ

Դիտարկել մասշտաբի հասկացությունը լանդշաֆտների դասակարգման մեջ:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դասարանում և դրսում:

Երբ

Դրսում՝ նախընտրելի է առավոտյան: Դասարանում՝ օրվա ընթացքում:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

ից 120 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Դրսում՝ քարտաթուղթ, նկարչական թուղթ, մկրատ, սոսինձ, ամուր հենակներ (որոնց վրա աշակերտները կարող են հենվել նկարելիս), տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ: Դասարանում՝ դրսում արված նկարները:

Ինչպես

Դասարանում աշակերտները քարտաթղթից կտրում են տարբեր չափերի և ձևերի (քառակուսի, ուղղանկյուն, եռանկյուն, կլոր) դիտաշրջանակներ:

Դրսում աշակերտներն ուսումնասիրում են լանդշաֆտը՝ կատարելով դրա առաջին դասակարգումը: Այնուհետև նրանք պահում են շրջանակները մեկնած ձեռքի հեռավորության վրա՝ լանդշաֆտի առանձին մասերը զննելու համար: Նրանք ստուգում են, թե արդյոք իրենց նախնական դասակարգումը դեռևս արդիական է, թե կարող է փոխվել՝ կախված կողմնորոշման ընտրված անկյունից (օրինակ՝ դեպի բնակավայրեր կամ դեպի անտառ, որը մոտ է այդ բնակավայրերին) կամ շրջանակի չափից կամ ձևից: Աշակերտները նկարում են իրենց շրջանակից դիտարկվող լանդշաֆտը՝ վերարտադրելով շրջանակի ուրվագիծը:

Դասարանում աշակերտները ներկայացնում են իրենց աշխատանքի արդյունքները՝ նշելով, թե արդյոք կան լանդշաֆտի որոշակի գերակշռող հատկանիշներ: Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Լանդշաֆտի դասակարգումը պետք է ներառի մասշտաբի հասկացությունը՝ հաշվի առնելով լանդշաֆտի հատկանիշների միջև համամասնությունները:

Միևնույն լանդշաֆտը կարող է դասակարգվել տարբեր կերպ՝ կախված ընտրված մասշտաբից, և դրանց մոտ կամ հեռու գտնվելու տարածության ընկալումից: Լանդշաֆտի ուսումնասիրության ընթացքում պետք է օգտագործել միևնույն մասշտաբը:

3. Լանդշաֆտի վերլուծության գործողություններ

Վերլուծության գործողությունների նպատակն է արթնացնել լանդշաֆտի նկատմամբ հետաքրքրասիրության և քննադատական մտածողության ոգի:

Նպատակներ

- Վերլուծել, թե ինչպես են բնական և մարդկային գործոններն ազդում և փոխազդում լանդշաֆտի հետ:
- Ուսումնասիրել լանդշաֆտի երկրաձևակազմական և հողօգտագործման օրինաչափությունները (բնական, գյուղական, քաղաքային և քաղաքամերձ տարածքներ):
- Ուսումնասիրել բնական աբիոտիկ և բիոտիկ հատկանիշները, ինչպես նաև մարդու միջամտության արդյունքում առաջանցած հատկանիշները (նշաններ, հետքեր և մնացորդներ, շինարարություն, գյուղատնտեսական և ծովային մշակաբույսեր) և դրանց փոխազդեցությունը:
- Ուսումնասիրել շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով ի հայտ եկած խնդիրները (ջուր, հող, օդ, կլիմա):

Խորհուրդներ

- Բացատրել բնական և մարդկային գործոնների ազդեցությունը և դրանց փոխազդեցությունը լանդշաֆտի դինամիկայի և փոխակերպման վրա:
- Հաշվի առնել, որ ժամանակի ընթացքում լանդշաֆտը զարգանում և փոփոխվում է:
- Խթանել գիտական հետազոտությունների համար անհրաժեշտ խստապահանջությունը (հուշող նշանների մեթոդական հավաքագրում, հստակ նշումներ, ճշգրիտ չափումներ):
- Խրախուսել խմբային աշխատանքը՝ առաջադրանքների բաշխումով:

Գործողություն 12. Բույսերի աճ

Նպատակ

Ուսումնասիրել տարատեսակ բուսականություն՝ դրանց դինամիկան հասկանալու համար:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դրսում և դասարանում:

Երբ

Դրսում՝ նախընտրելի է առավոտյան: Դասարանում՝ օրվա ընթացքում:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

40-ից 80 րոպե: Գործողությունը կարելի է կրկնել լանդշաֆտի տարբեր տեսակների համար:

Անհրաժեշտ պարագաներ

Պարան, չափերիզ, միլիմետրաթուղթ, տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ:

Ինչպես

Դրսում աշակերտներն աշխատում են փոքր խմբերով՝ մի քանի քառակուսի մետր մակերեսով հողակտորի վրա, որը սահմանազատված է պարանով: Նրանք հաշվում են այնտեղ հայտնաբերած բուսատեսակները, փնտրում են դրանց անվանումները, ստուգում են սածիլների առկայությունը, գնահատում են բուսականության խտությունը և բարձրությունը, չափում են ծառաբների լայնությունը: Նրանք գրառումներ են անում, միլիմետրաթղթի վրա նշում են, թե որտեղ են հայտնաբերել այս կամ այն տեսակը և նկարում են դրանք:

Դրսում կամ դասարանում աշակերտները ներկայացնում են իրենց հետազոտության արդյունքները՝ ուսումնասիրելով, թե արդյոք բուսականությունը հարուստ է և բազմազան, արդյոք այն տարբերվում է տարբեր հողակտորներում: Նրանք ուսումնասիրում են լանդշաֆտի բուսականության դինամիկան և մասնակցում ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Բուսական համակեցությունները կազմված են մի քանի տեսակ առանձնյակներից, որոնք փոխազդում են ինչպես նույն տեսակի առանձնյակների, այնպես էլ տարբեր տեսակների առանձնյակների հետ:

Բուսականությունը կարևոր դեր է խաղում հողերի և հումուսի արտադրության և պաշտպանության, ածխածնի շրջափուլի և թթվածնի արտադրության գործում:



Գործողություն 13. Կենդանիների հետքեր

Նպատակ

Բացահայտել կենդանատեսակների ներկայությունը հուշող նշաններով և հետքերով:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դրսում, այնուհետև դասարանում:

Երբ

Դրսում՝ նախընտրելի է առավոտյան: Դասարանում՝ օրվա ընթացքում:

Ում հետ

Դրսում աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

40-ից 60 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Դրսում՝ տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ, ձեռնոցներ, պարկեր և տուփեր (նմուշներ հավաքելու համար) և պիտակներ (դրանք մակնշելու համար): Դասարանում՝ խոշորացույցներ, նկարչական թուղթ:

Ինչպես

Դրսում փոքր խմբերով աշակերտները լուռ քայլում են՝ կենդանիների ձայներ որսալու նպատակով: Իրենց ճանապարհին նրանք փնտրում են հետքեր (թաթերի հետքեր) կամ մնացուկային նմուշներ (փետուրներ, մազեր, բուրդ, արտաթորանք): Նրանք նշում են դրանց տեղակայումը, նկարում են և հավաքում որոշ նմուշներ:

Դասարանում աշակերտներն ուսումնասիրում են հավաքած նմուշները և փորձում պատի վահանակի վրա գտնել այն ճանապարհը, որով կենդանիները ապաստան և սնունդ են որոնել: Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Թեև միշտ չէ, որ հեշտ է տեսնել կամ լսել նրանց, այնուամենայնիվ, կենդանատեսակներ բնակվում են լանդշաֆտների մեծ մասում, հատկապես, եթե այնտեղ ջուր կա:

Կենդանատեսակների մասին գիտելիքները հնարավորություն են տալիս հասկանալ, որ լանդշաֆտի դեգրադացիան բացասաբար է ազդում այդ տեսակների վրա:

Լանդշաֆտային հետազոտություններում պետք է չափել ամենատարածված տեսակների բնակեցվածության խտությունը և բացահայտել էնդեմիկ տեսակները:

Գործողություն 14. Մարդկային հետք

Նպատակ

Բացահայտել մարդկանց ազդեցությունը լանդշաֆտի վրա:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դրսում, այնուհետև՝ դասարանում:

Երբ

Դրսում՝ նախընտրելի է առավոտյան: Դասարանում՝ օրվա ընթացքում:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են փոքր խմբերով, այնուհետև մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Տևողություն

40-ից 80 րոպե դրսում: 30 րոպե դասարանում եզրակացությունները ներկայացնելու համար:

Անհրաժեշտ պարագաներ

Տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ, պարկեր և ձեռնոցներ (թափոններ հավաքելու համար):

Ինչպես

Դրսում աշակերտները ճանապարհի երկայնքով բաժանվում են փոքր խմբերի և հետազոտում մի քանի մետր հատված: Նրանք փնտրում են ոտնահետքեր (տղամարդկանց, կանանց և երեխաների) և փոխադրամիջոցների հետքեր (հեծանիվների, մանկասայլակների, մոտոցիկլետների, ավտոմեքենաների), ինչպես նաև թափոններ (ստվարաթուղթ, թուղթ, պոլիէթիլենային տոպրակներ, շշեր, թիթեղամաններ, ապակու և հագուստի կտորտանք, ծխախոտի մնացորդներ): Նրանք նշում են դրանց քանակը, որտեղից են դրանք հայտնվել և ինչ ազդեցություն ունեն լանդշաֆտի վրա: Նրանք նկարում են ոտնահետքերը, փոխադրամիջոցների հետքերը կամ աղբը:

Վերադառնալով դասարան՝ աշակերտները ներկայացնում են իրենց հետազոտության արդյունքները: Նրանք գնահատում են այդ ճանապարհի գործածականության աստիճանը և լանդշաֆտի վրա վերջինիս գործածության ազդեցությունը: Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Մարդիկ անհամեմատ ավելի շատ են փոխակերպում լանդշաֆտը, քան կենդանիները և բույսերը: Արդյունաբերական հեղափոխությունից ի վեր շատ քիչ լանդշաֆտներ կան, որտեղ չի արձանագրվել մարդու ներկայությունը:

Որոշակի գործունեության տեսակներ առաջացնում են աղտոտում և անախորժություններ, որոնք ազդում են լանդշաֆտի վրա ոչ միայն գեղագիտական, այլև գործառնական տեսանկյունից:

Գործողություն 15. Ի՞նչ է կատարվում այստեղ

Նպատակ

Վերլուծել լանդշաֆտի վրա բնական և մարդկային գործոնների ազդեցությունը և փոխազդեցությունը:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դասարանում:

Երբ

Օրվա ցանկացած ժամի:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

60 րոպե տևողությամբ մի քանի դասընթաց:

Անհրաժեշտ պարագաներ

Ստվարաթուղթ, գրաֆիտային և գունավոր մատիտներ, մկրատներ:

Ինչպես

Աշակերտները կտրում են 32 քարտ: Նրանք պատրաստում են քարտերի երկու հավաքածու, որոնք նկարազարդում են գծապատկերներով կամ կոլաժներով:

Առաջին խմբի քարտերը (10 քարտ) վերնագրվում են «Փոխակերպման գործոն»: Դրանք ներկայացնում են լանդշաֆտի փոխակերպման գործոնները, որոնք բնական (քամի, մակընթացություն, հրաբխային ժայթքում) կամ մարդկային (ենթակառուցվածքի շինարարություն, ավտոմոբիլային երթևեկություն) կամ և՛ բնական, և՛ մարդածին (էրոզիա, կլիմայի փոփոխություն) ծագում ունեն:

Երկրորդ խմբի քարտերը (22 քարտ) վերնագրվում են «Լանդշաֆտը առաջ և հետո»: Զույգ քարտերով ներկայացվում է միևնույն լանդշաֆտը փոխակերպումից առաջ և հետո: Լանդշաֆտի հատկանիշների ձևերը, գույները և ռելիեֆները կարող են տարբերվել (օրինակ՝ անմշակ ցանքատարածություն և նույն դաշտը մշակելուց հետո, դաշտը բնական վիճակում և նույն դաշտը մայրուղով հատված, խաղողի որթատունկերն ամռանը, ապա ձմռանը. տերևախիտ անտառն ամռանը, այունհետև ձմռանը, անտառը նախքան

հրդեհը և հրդեհից հետո, բնական ծովափը և նույն ծովափը՝ նավամատույց դարձած, փոքր գյուղը և նույն գյուղը՝ քաղաք դարձած. քաղաքը հրաբխի ժայթքումից առաջ և հետո):

Քարտերը խառնում են, հետո բաժանում: Աշակերտը «Լանդշաֆտը առաջ և հետո» շարքից խաղարկում է մեկ քարտ: Այն աշակերտը, որն ունի դրա զույգ քարտը, խաղարկում է այն: Աշակերտներն իրենց քարտերում փորձում են գտնել «Փոխակերպման գործոն» շարքի քարտ, որը կարող է բացատրել դիտարկվող լանդշաֆտի փոխակերպումը: Այն աշակերտը, որն առաջինն է խաղարկում քարտը և բացատրում, թե ինչու է տեղի ունեցել լանդշաֆտի փոխակերպում, շահում է «Լանդշաֆտը առաջ և հետո» շարքից քարտերի զույգը: Հաղթողը մի կողմ է դնում «Փոխակերպման գործոն» քարտը և նորը վերցնում: «Լանդշաֆտը առաջ և հետո» շարքի առավելագույն թվով զույգ քարտեր շահած աշակերտը հաղթում է խաղը: Խաղի ավարտին աշակերտները խառնում են քարտերը և կրկին բաժանում:

Հիմնական հասկացություններ

Լանդշաֆտը ենթարկվում է փոխակերպումների ինչպես սեփական դինամիկայի, այնպես էլ ազդող ու փոխազդող բնական և մարդկային գործոնների արդյունքում:

Թեև եղանակից կախված և տարիների ընթացքում լանդշաֆտը փոփոխվում է, ըստ էության, այն մնում է նույնը:

Եթե լանդշաֆտն այնպես է փոխակերպվել, որ չի կարող վերաստեղծվել կամ վերականգնվել, ապա այս լանդաշֆտն անպայման կփոխվի:

Գործողություն 16. Ի՞նչն է ձևավորվում առաջին հերթին

Նպատակ

Ուսումնասիրել, թե ինչպես են բնական աբիոտիկ տարրերը փոխակերպում լանդշաֆտը:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Նախընտրելի է դրսում, ծանծաղ առվի շրջակայքում: Դպրոցում՝ խաղահրապարակում:

Երբ

Օրվա ցանկացած ժամի:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են խմբերով:

Տևողություն

60-ից 80 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Դրսում՝ մետաղի կտոր քարերը քերելու համար, նոսր աղաթթու (միայն ուսուցչի օգտագործման համար): Դպրոցում՝ ավազան, հող, ցնցուղ, քարեր, մետաղի կտոր քարերը քերելու համար, նոսր աղաթթու (միայն ուսուցչի օգտագործման համար):

Ինչպես

Դրսում առվի մոտ աշակերտները ջուրն են նետում երեք առարկա (օրինակ՝ տերև, կեղևի կտոր և փոքր ճյուղ): Նրանք համեմատում են դրանց շարժման արագությունը և հետևում, թե որտեղ կանգ կառնեն (ջրի հոսքով շարժվող այլ տարրերը հավանաբար կուտակված կլինեն այդ նույն տեղում): Նրանք դիտարկում են ջրի ուժը և դինամիկան (էրոզիա, նստվածք, սերմերի տեղափոխում, գետահունի փոփոխություն):

Աշակերտները շարունակում են գործողությունը՝ հավաքելով տարբեր ձևերի և բաղադրության մի քանի քար: Նրանք զննում են դրանք, ստուգում դրանց ամրությունը (մետաղի կտորով քերելով), ապա լսում են դրանցից արձակված ձայնը մեկ այլ տարրի հետ շփման արդյունքում: Աշակերտներն

ուսումնասիրում են որոշ քարերի (ավազաքար, կրաքար) մաշվածությունը, ինչպես նաև անձրևի և քամու ազդեցությամբ ավելի փափուկ քարերի քայքայումը: Ուսուցիչը կարող է փորձ կատարել՝ քարի կտորի վրա քսելով մեկ կաթիլ նոսր աղաթթու՝ տեսնելու, թե արդյոք այն լուծվում է: Աշակերտները մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Եթե գործողությունն անցկացվում է դպրոցում, աշակերտները փորձում են ջրի հոսք ստեղծել խաղահրապարակում և դիտարկել ջրի ուժը և դինամիկան: Նրանք նաև ուսումնասիրում են քարերի բնույթը և բաղադրությունը: Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Ջուրը և քամին ձևավորում են լանդշաֆտի ռելիեֆը:

Ջուրն ունի զգալի ուժ: Փոքր ջրահոսքը կարող է պտտել ջրաղացի անիվը:

Կախված բնույթից, դիմադրողականությունից և թափանցելիությունից՝ ժայռից առաջանում են հողի տարբեր տեսակներ:



Գործողություն 17. Լանդշաֆտի կախարդանքը

Նպատակ.

Ուսումնասիրել, թե ինչպես է լանդշաֆտը փոփոխվում ժամանակի ընթացքում:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դրսում, այնուհետև դասարանում:

Երբ

Տարվա ցանկացած ժամանակ:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

30-ից 60 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Քաղաքային տարածքի և դրա շրջակայքի վերաբերյալ հին և նոր փաստաթղթեր (լուսանկարներ, փորագրանկարներ, նկարներ, փաստավավերագրական ֆիլմեր, ֆիլմեր, հին լրագրերից հոդվածներ կամ այլ գրվածքներ), պատճենման թուղթ, նկարչական թղթի գլանափաթեթ, տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ:

Ինչպես

Աշակերտներն իրենց ծանոթ լանդշաֆտը համեմատում են այդ նույն լանդշաֆտի ավելի հին պատկերի հետ: Լանդշաֆտի փոփոխություն նկատելու դեպքում նրանք վերլուծում են այդ փոփոխությունն առաջացնող բնական և մարդկային գործոնները: Նրանք հետազոտություններ են կատարում և օգտվում արխիվներից:

Աշակերտները ներկայացնում են լանդշաֆտը երկու տարբեր ժամանակաշրջաններում, սակայն միևնույն տեսանկյունից: Աշակերտները (պատճենման թղթի վրա) ուրվագծում են լանդշաֆտն իր նախկին տեսքով, այնուհետև (պատճենման մեկ այլ թղթի վրա) ուրվագծում են լանդշաֆտն իր ներկայիս տեսքով: Նրանք համադրում են այդ երկու թղթերը տեսնելու արդյոք՞ ուրվագծերը տարբերվում են: Նրանք բնորոշում են հիմնական

փոխակերպումները (տներ, ճանապարհներ, հրապարակներ, դաշտեր) և պատրաստում պատի վահանակ՝ դրանք ներկայացնելու համար: Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Լանդշաֆտը՝ որպես համակարգ, ստատիկ չէ, այլ՝ դինամիկ:

Այն փոփոխվում է ժամանակի ընթացքում՝ կախված փոխազդող բնական և մարդկային գործոններից:





4. Լանդշաֆտի արտացոլման գործողություններ

Լանդշաֆտի արտացոլմանն ուղղված գործողությունների նպատակն է զարգացնել լանդշաֆտի փոփոխությանը հանգեցնող դինամիկայի և ճնշումների վերաբերյալ դատողություններ կատարելու կարողությանը՝ կարծիք կազմելու համար:

Նպատակներ

- Բացահայտել լանդշաֆտի փոխակերպման բնական և մարդկային գործոնները:
- Նույնականացնել լանդշաֆտի պահպանության, կառավարման ու պլանավորման հին և ժամանակակից գիտելիքները:
- Կազմակերպել հանդիպումներ տարածքի շահագրգիռ կողմերի և մասնավորապես շահագրգիռ բնակչության հետ:
- Գնահատել նույնականացված լանդշաֆտները՝ հաշվի առնելով դրանց վերապահված առանձնահատուկ արժեքները:

Խորհուրդներ

- Կիրառել ստացված գիտելիքները՝ իրական իրավիճակներից ներշնչված փորձեր կատարելով:
- Զարգացնել աշակերտների՝ վարկածներ առաջ քաշելու, ինչպես նաև ստեղծագործական, բայց և իրատեսական առաջարկներ ներկայացնելու կարողությունը:
- Համոզվել, որ աշակերտները իրազեկ են, որ խաղերը (հատկապես՝ տեսախաղերը) իրականության մոդելավորումներ են, այլ ոչ թե իրականություն: Իրական աշխարհում միշտ չէ, որ հնարավոր է «անել և հետարկել», ինչպես կախարդական պլանշետով կամ համակարգչով:

Գործողություն 18. Պլանավորել տարածքը

Նպատակ

Հասկանալ տարածքային պլանավորման բարդությունը:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դասարանում կամ խաղահրապարակում:

Երբ

Օրվա ցանկացած ժամի:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

30-ից 60 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Ստվարաթուղթ, մկրատ, սոսինձ, պլաստիլին, խցան, նկարչական թուղթ, ստվարաթուղթ (մոդելի համար):

Ինչպես

Աշակերտները մտածում են տարածքում մարդկային գործունեությունը տարածքի վրա բաշխելու եղանակի մասին: Պատի վահանակի (կամ մոդելի) վրա նրանք նշում են անհրաժեշտ տրանսպորտային և հաղորդակցական ենթակառուցվածքների, տների, հրապարակների, պուրակների և այգիների, գյուղատնտեսական, անասնաբուծական և ձկնաբուծական տարածքների տեղակայումը, ինչպես նաև վայրի բնաշխարհի պահպանման համար անհրաժեշտ կենսավայրերի, վերգետնյա և ջրային միջանցքների տեղակայումը:

Նրանք ստվարաթղթից կտրում են ֆիգուրներ, որոնք ներկայացնում են լանդշաֆտի ինչպես բնական (գետեր, ժայռեր, ծառեր, բույսեր, կենդանիներ), այնպես էլ մարդու միջամտության արդյունքում ծագած (դպրոցներ, տներ, թատրոններ, թանգարաններ, մարզադաշտեր, խանութներ, գործարաններ, հիվանդանոցներ, քարհանքեր) տարրերը և հատկանիշները: Նրանք տեղադրում և սոսնձում են այդ ֆիգուրները պատի վահանակի (կամ մոդելի)

վրա: Նրանք նշում են փողոցների, հրապարակների, շենքերի, ծառերի և այլ տարրերի կամ հատկանիշների անվանումները և մասնակցում ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Տարածքային պլանավորումը վերաբերում է պետական հատվածի կողմից օգտագործվող այն մեթոդներին, որոնք ազդում են տարբեր մասշտաբի տարածքներում մարդկանց և գործունեության տեսակների բաշխման, ինչպես նաև տարբեր ենթակառուցվածքների, հանգստի վայրերի և բնական տարածքների տեղակայման վրա:

Լանդշաֆտի պլանավորում նշանակում է վճռական հեռանկարային գործողություն՝ ուղղված լանդշաֆտների բարելավմանը, վերականգնմանը կամ ստեղծմանը:



Գործողություն 19. Ձեր կարծիքով ի՞նչ տեղի կունենա, եթե...

Նպատակ

Կանխատեսել լանդշաֆտի զարգացումը ժամանակի ընթացքում:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դասարանում:

Երբ

Օրվա ցանկացած ժամի:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են փոքր խմբերով:

Տևողություն

30-ից 60 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Ստվարաթղթի պաշար և փափուկ թուղթ, լանդշաֆտների պատկերներ (լուսանկարներ, գծապատկերներ, նկարներ), գրաֆիտային և գունավոր մատիտներ:

Ինչպես

Աշակերտների յուրաքանչյուր խումբ դիտարկում է որևէ լանդշաֆտ (օրինակ՝ իրենց թաղամասը, քաղաքի մուտքը, գյուղական վայրը): Նրանք պատրաստում են պտտվող ձողին ամրացված բազմանիստ վահանակ, որի յուրաքանչյուր նիստի վրա ներկայացնում են բնական և մարդկային գործոնները, որոնք կարող են փոխակերպել այդ նույն լանդշաֆտը (ջրհեղեղ, էրոզիա, նոր թաղամասի կառուցում, պուրակի ստեղծում, մթնոլորտի տաքացում):

Աշակերտները պտտում են ձողը գրասեղանի վրա, և երբ այն կանգ է առնում, ուսումնասիրում են լանդշաֆտի փոխակերպման այն գործոնը, որի նիստը հենվում է սեղանին: Նրանք բացատրում են տվյալ փոխակերպման տեղի ունենալու պարագայում հնարավոր հետևանքները: Նրանք մշակում են զարգացման սցենարներ և ձևակերպում լանդշաֆտի պահպանության, կառավարման և պլանավորման առաջարկներ: Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Լանդշաֆտը փոփոխվում է ժամանակի ընթացքում՝ կախված բնական և/կամ մարդկային գործոնների փոխազդեցությունից:

Լանդշաֆտի վերաբերյալ կայացվող որոշումները պետք է հիմնված լինեն լանդշաֆտի զարգացման հիմքում ընկած գործընթացների ընկալման վրա:

Բարդ լանդշաֆտները կարող են անդառնալիորեն փոփոխվել՝ ուժեղ ճնշումների ազդեցության տակ:



Գործողություն 20. Որոշումը ձերն է

Նպատակ

Որոշումներ կայացնել լանդշաֆտի պահպանության, կառավարման և պլանավորման վերաբերյալ:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դասարանում:

Երբ

Օրվա ցանկացած ժամի:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են խմբերով:

Տևողություն

30-ից 60 րոպե:

Անհրաժեշտ պարագաներ

Լանդշաֆտի վերաբերյալ տեղեկություններ և տվյալներ, որոնք հավաքվել են տեղում, բնակիչներից, գրադարաններում կամ ինտերնետում (քարտեզներ, լուսանկարներ և օդալուսանկարներ):

Ինչպես

Աշակերտներն ուսումնասիրում են լանդշաֆտների վերաբերյալ իրական կամ մտացածին վիճահարույց նախագծեր (օրինակ՝ ավտոմայրուղու, երկաթուղային գծի, ամբարտակի կամ գյուղի մուտքի մոտ մեծ կայանատեղիի կառուցում, հանքի շահագործում, հիպերմարկետի կառուցում, շենքերի քանդում, բնական պարկի կամ հնագիտական տեղանքի փոփոխություն): Նրանք խաղում են դերախաղեր՝ պաշտպանելու իրենց տեսակետը (օրինակ՝ նրանք կարող են քննարկել հիվանդանոցի տեղակայման ընտրության մի քանի տարբերակներ՝ հարյուրամյա ծառերի այգի, չօգտագործվող գործարան ժառանգության համար հետաքրքրություն ներկայացնող տարածքում, համեմատաբար անարդյունավետ մշակվող դաշտ քաղաքամերձ տարածքում): Աշակերտներից յուրաքանչյուրը պաշտպանում է իր տեսակետը (բնապահպանը կարող է հանդես գալ այգում հիվանդանոցի կառուցման դեմ, արդյունաբերական ժառանգության պաշտպանը կարող է դեմ լինել

գործարանի քանդմանը, իսկ փոքր արտադրողը կարող է չհամաձայնել իր բերրի հողը կորցնելու հետ): Աշակերտներն ուսումնասիրում են առկա տարբերակները և ընտրություն կատարում: Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Տարբերվող շահերի դեպքում հաճախ դժվար է որոշում կայացնել լանդշաֆտի վերաբերյալ:

Լանդշաֆտի որակի նպատակները հնարավորություն են ընձեռում իրավասու պետական մարմիններին հաշվի առնել իրենց շրջակա լանդշաֆտային առանձնահատկությունների վերաբերյալ հասարակության ձգտումները:



5. Լանդշաֆտի հաշվետվության գործողություններ

Լանդշաֆտի հաաշվետվության գործողությունների նպատակն է սովորել ներկայացնել լանդշաֆտի հետ կատարած աշխատանքի արդյունքները:

Նպատակներ

- Ձեկուցել լանդշաֆտի էական կամ առանձնահատուկ հատկանիշների մասին:
- Քարտեզագրել լանդշաֆտի այն ուղիները, որոնցով պետք է անցնեն:
- Ներկայացնել լանդշաֆտի մասին հավաքագրած տեղեկությունները և վկայությունները:
- Անդրադառնալ գեղարվեստական նվաճումներին (գրական, նկարչական, երաժշտական, թատերական, կինեմատոգրաֆիական):

Խորհուրդներ

- Խրախուսել աշակերտներին՝ ներկայացնելու իրենց հետազոտության արդյունքները:
- Օգտագործել տարբեր արտահայտչաձևեր (գրավոր, բանավոր, գրաֆիկական, պլաստիկ, ձայնային, մարմնական) լանդշաֆտը ներկայացնելու համար:
- Սովորել հաղորդակցվել և բանավիճել (սկզբում առանց տեսալսողական միջոցների, այնուհետև այդ միջոցներով):
- Աշակերտներին ներգրավել լանդշաֆտի հետ կապված միջոցառումներին և խթանել փորձի փոխանակումը:

Գործողություն 21. Լանդշաֆտային ուղի

Նպատակ

Ներկայացնել լանդշաֆտի առանձնահատուկ հատկանիշները:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դասարանում և դրսում:

Երբ

Օրվա ցանկացած ժամի:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և փոքր խմբերով:

Տևողություն

30-ից 60 րոպե տևողությամբ երկու դասընթաց:

Անհրաժեշտ պարագաներ

Քարտեզ և լանդշաֆտների պատկերներ (լուսանկարներ, գծապատկերներ, նկարներ), պատճենման թուղթ, գրաֆիտային և գունավոր մատիտներ:

Ինչպես

Դասարանում աշակերտները նախագծում են լանդշաֆտային ուղի: Նրանք քարտեզի վրա գծում են երթուղին՝ նշելով կանգառի կետերը և այդ ուղին անցնելու համար անհրաժեշտ ժամանակը: Նրանք պատրաստում են լանդշաֆտի վերաբերյալ բացատրություններ՝ յուրաքանչյուր կանգառը ներկայացնելու համար: Նրանք ներկայացնում են իրենց աշխատանքի արդյունքներն իրենց ընտանիքներին կամ ավելի լայն լսարանի:

Դրսում նրանք ուղեկցում են մարդկանց ոչ մեծ խմբի (իրենց ընտանիքներին կամ այլ անձանց) այդ ուղիով, և յուրաքանչյուր կանգառում ներկայացնում նախապես պատրաստած բացատրությունները:

Հիմնական հասկացություններ

Լանդշաֆտն անհրաժեշտ տարածք է բարեկեցության և առողջության համար, ինչպես ֆիզիկական (զբոսանք, հանգիստ, սպորտ), այնպես էլ մտավոր (մտորում, ոգեշնչում):

Գոյություն ունեցող ուղիով գնալը քայլողին հնարավորություն է տալիս ընկալել լանդշաֆտը՝ առանց դրան վնաս հասցնելու:



Գործողություն 22. Մեր լանդշաֆտը

Նպատակ

Հաղորդել, թե ինչպես է ընկալվում լանդշաֆտը:

Առարկա

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դասարանում և դրսում:

Երբ

Օրվա ցանկացած ժամի:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են փոքր խմբերով:

Տևողություն

Ից 60 րոպե տևողությամբ մի քանի դասընթաց:

Անհրաժեշտ պարագաներ

Դրսում՝ ձայնագրող սարք, թուղթ, գրաֆիտային և գունավոր մատիտներ, տետրեր, քարտեզ: Դասարանում՝ նկարչական թուղթ, գրաֆիտային և գունավոր մատիտներ:

Ինչպես

Դասարանում աշակերտները պատրաստում են հարցաշար իրենց ծանոթ լանդշաֆտի վերաբերյալ:

Հարցերի օրինակներ.

- Լանդշաֆտի տարածքի ո՞ր հատվածները և հատկանիշներն եք ձեզ նախընտրում (կամ ամենաքիչն եք հավանում): Ինչո՞ւ:
- Որո՞նք են լանդշաֆտի առավել էական կամ առանձնահատուկ հատկանիշները (և նվազագույն էական կամ առանձնահատուկ): Ինչո՞ւ:
- Գիտե՞ք այդ տարածքի պատմությունը:
- Կցանկանայի՞ք վերականգնել այդ լանդշաֆտի որոշ հատկանիշներ կամ հատվածներ:
- Գիտե՞ք այդ լանդշաֆտի վերաբերյալ որևէ արվեստի գործ (գրվածք, նկար, երաժշտություն, կինոնկար):

- Գիտե՞ք այդ լանդշաֆտի հետ կապված որևէ ավանդույթ կամ սովորույթ (խոհանոց, պար, տոնակատարություն, խաղ):
- Գիտե՞ք այդ լանդշաֆտին առնչվող որևէ հմտություն (տների կամ չոր շարվածքով քարե պատերի կառուցում, աճեցման եղանակներ, ծառատունկ և ծառերի խնամք) կամ արհեստ (խեցեգործություն, ասեղնագործություն):
- Ձեր կարծիքով՝ ի՞նչ ավանդական գիտելիքներ (տների կամ չոր շարվածքով քարե պատերի կառուցում, աճեցման եղանակներ, ծառատունկ և ծառերի խնամք) կամ արհեստներ (խեցեգործություն, ասեղնագործություն) են կապված այդ լանդշաֆտի հետ: Միաժամանակ ինչ ժամանակակից գիտելիքներ կարող եք նշել:

Դրսում աշակերտներն այս հարցերը տալիս են իրենց ընտանիքներին կամ այլ մարդկանց:

Դասարանում աշակերտները վերլուծում են պատասխանները, այնուհետև ստուգում՝ արդյոք հարցման արդյունքները հանգեցրել են լանդշաֆտի վերաբերյալ իրենց ընկալման փոփոխության: Նրանք մասնակցում են ընդհանուր քննարկմանը:

Հիմնական հասկացություններ

Լանդշաֆտները ներգործում են մարդկանց և հասարակությունների մտածելակերպի, կենսակերպի և գործելակերպի վրա:

Լանդշաֆտները կրում են շրջակա միջավայրին մարդկանց և հասարակությունների հարմարվելու հետքերը:

Գործողություն 23. Իմ լանդշաֆտի ալբոմը

Նպատակ

Ներկայացնել, փոխանակել և համեմատել լանդշաֆտի մասին տեղեկություններ:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դասարանում:

Երբ

Օրվա ցանկացած ժամի, մի քանի դասընթացի ընթացքում:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

Գործողությունը կարող է տևել մեկ կիսամյակ կամ ամբողջ տարի:

Անհրաժեշտ պարագաներ

Լանդշաֆտների պատկերներ (լուսանկարներ, գծապատկերներ, նկարներ), տետրեր, գրաֆիտային և գունավոր մատիտներ, սոսինձ:

Ինչպես

Յուրաքանչյուր աշակերտ պատրաստում է ալբոմ՝ ազատորեն ընտրելով այն ներկայացնելու և նկարազարդելու եղանակը: Աշակերտները ներկայացնում են իրենց սեփական հայտնագործությունները, տպավորությունները, մտորումները լանդշաֆտի վերաբերյալ և ձևակերպում դրա պահպանության, կառավարման և պլանավորման մասին առաջարկներ: Նրանք ներկայացնում են իրենց աշխատանքի արդյունքներն իրենց ընտանիքներին կամ ավելի լայն լսարանի:

Աշակերտները ստեղծում են լրագիր լանդշաֆտի մասին, կամ տեսալսողական ներկայացում՝ իրենց գործունեության արդյունքները հեռու կամ մոտ գտնվող այլ դպրոցների աշակերտներին ներկայացնելու նպատակով:

Հիմնական հասկացություններ

Լանդշաֆտի վերաբերյալ գիտելիքները պահանջում են բազմաառարկայական մոտեցում:

Գիտելիքների փոխանակումը վերջինս հարստացնող և լայնախոհությանը նպաստող գործընթաց է:

Գործողություն 24. Իմ լանդշաֆտն այսպիսին է

Նպատակ

Լանդշաֆտի վերաբերյալ տեղեկությունների ներկայացման և փոխանցման խթանում:

Առարկաներ

Գիտություն և տեխնոլոգիա, պատմություն, աշխարհագրություն, լեզուներ, մաթեմատիկա, արվեստ, ֆիզիկական դաստիարակություն, քաղաքացիական կրթություն:

Որտեղ

Դասարանում:

Երբ

Օրվա ցանկացած ժամի: Դա կարող է լինել հոկտեմբերի 20-ը՝ Եվրոպայի խորհրդի Լանդշաֆտի միջազգային օրը:

Ում հետ

Աշակերտներն աշխատում են անհատապես և խմբերով:

Տևողություն

Տարբեր տևողությամբ մի քանի դասընթաց:

Անհրաժեշտ պարագաներ

Լանդշաֆտի պատկերներ (լուսանկարներ, գծապատկերներ, նկարներ), գծանկարի կամ գրաֆիկական արվեստի պարագաներ, երաժշտական գործիքներ, քարտեզներ:

Ինչպես

Աշակերտները կազմակերպում են «Լանդշաֆտի օր», որին հրավիրում են մասնակցելու ուսուցիչներին, իրենց ընտանիքներին, հնարավորության դեպքում նաև ապահովում են ավելի լայն լսարան: Նրանք նախապատրաստում են ցուցահանդես (պատի վահանակներ, մոդելներ, լանդշաֆտի ալբոմ), ինչպես նաև ներկայացում (բեմադրություններ, էսքիզներ, դերախաղեր, պոեզիայի կամ վկայությունների ընթերցում, տեսալսողական ձայնագրություններ):

Նրանք պետք է իմանան իրենց դպրոցի պատմությունը և աշխարհագրական տեղադիրքը: Նրանք զարդարում են դպրոցի մուտքը, իրենց դասարանը, ինչպես նաև խաղահրապարակը՝ հյուրերին դիմավորելու համար:

Հիմնական հասկացություններ

Լանդշաֆտի նկատմամբ հետաքրքրությունը նպաստում է դրա պահպանմանը, կառավարմանը և պլանավորմանը:

Լանդշաֆտի վերաբերյալ տեղեկությունների ներկայացումը և փոխանցումը խթանում են դրա արժեքի և դերի գիտակցումը:

Եզրակացություն

Բնական լանդշաֆտն աներևակայելի բազմազանություն և գեղեցկություն ունեցող կենդանի օրգանիզմ է: Դարերի ընթացքում մարդիկ այն ձևավորել են, ինչը հանգեցրել է Է՛լ ավելի մեծ բազմազանության: Այդուհանդերձ, անհրաժեշտ է հաշվի առնել այն հետևանքները, որոնք շատ արագ և արմատական փոխակերպումների կարող են բերել ժամանակի ընթացքում:

Գյուղատնտեսության, անտառաբուծության, արդյունաբերական և օգտակար հանածոների արտադրության տեխնիկայի, տարածքային պլանավորման, քաղաքաշինության, տրանսպորտային ենթակառուցվածքների, զբոսաշրջության և հանգստի ոլորտների զարգացումը, ինչպես նաև ընդհանուր մակարդակում համաշխարհային տնտեսության փոփոխությունները շատ դեպքերում արագացնում են լանդշաֆտների փոխակերպման:

Որոշ մշակույթներ կարող են ունենալ լանդշաֆտի իրենց ուրույն հայեցակարգը, սակայն դրանք բոլորը վերաբերում են կյանքի որակի և կենսամիջավայրի հասկացություններին, ուստի ելնելով վերոնշյալից՝ անհրաժեշտ է շարունակել հոգ տանել լանդշաֆտի մասին:

Եվրոպայի խորհրդի հրատարակչությունների վաճառքի գործակալներ
Agents de vente des publications du Conseil de l'Europe

ԲԵԼԳԻԱ/BELGIQUE
La Librairie Européenne -
The European Bookshop
Rue de l'Orme, 1
BE-1040 BRUXELLES
Հեռ.: + 32 (0)2 231 04 35
Ֆաքս: + 32 (0)2 735 08 60
Էլ-փոստ: info@libeurop.eu
http://www.libeurop.be

Ժան դե Լանոյ /DL ծառայություններ
c/o Michot Warehouses
Bergense steenweg 77
Chaussée de Mons
BE-1600 SINT PIETERS LEEUW
Ֆաքս: + 32 (0)2 706 52 27
Էլ-փոստ: jean.de.lannoy@dl-servi.com
http://www.jean-de-lannoy.be

ԿԱՆԱԴԱ/CANADA
Renouf Publishing Co. Ltd.
22-1010 Polytek Street
CDN-OTTAWA, ONT K1J 9J1
Հեռ.: + 1 613 745 2665
Ֆաքս: + 1 613 745 7660
Toll-Free Հեռ.: (866) 767-6766
Էլ-փոստ: order.dept@renoufbooks.com
http://www.renoufbooks.com

ԽՈՐՎԱԹԻԱ/CROATIE
Robert's Plus d.o.o.
Marasoviçeva 67
HR-21000 SPLIT
Հեռ.: + 385 21 315 800, 801, 802, 803
Ֆաքս: + 385 21 315 804
Էլ-փոստ: robertsplus@robertsplus.hr

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ/
RÉPUBLIQUE TCHÈQUE
Suweco CZ, s.r.o.
Klecakova 347
CZ-180 21 PRAHA 9
Հեռ.: + 420 2 424 59 204
Ֆաքս: + 420 2 848 21 646
Էլ-փոստ: import@suweco.cz
http://www.suweco.cz

ԴԱՆԻԱ/DANEMARK
GAD
Vimmelskaftet 32
DK-1161 KØBENHAVN K
Հեռ.: + 45 77 66 60 00
Ֆաքս: + 45 77 66 60 01
Էլ-փոստ: reception@gad.dk
http://www.gad.dk

ՖԻՆԼԱՆԴԻԱ/FINLANDE
Akateeminen Kirjakauppa
PO Box 128
Keskuskatu 1
FI-00100 HELSINKI
Հեռ.: + 358 (0)9 121 4430
Ֆաքս: + 358 (0)9 121 4242
Էլ-փոստ: akatilaus@akateeminen.com
http://www.akateeminen.com

ՖՐԱՆՍԻԱ/FRANCE
Please contact directly /
Merci de contacter directement
Council of Europe Publishing
Éditions du Conseil de l'Europe
F-67075 STRASBOURG Cedex
Հեռ.: + 33 (0)3 88 41 25 81
Ֆաքս: + 33 (0)3 88 41 39 10
Էլ-փոստ: publishing@coe.int
http://book.coe.int

Librairie Kléber
1, rue des Francs-Bourgeois
F-67000 STRASBOURG
Հեռ.: + 33 (0)3 88 15 78 88
Ֆաքս: + 33 (0)3 88 15 78 80
Էլ-փոստ: librairie-kleber@coe.int
http://www.librairie-kleber.com

ՆՈՐՎԵԳԻԱ/NORVÈGE
Akademika
Postboks 84 Blindern
NO-0314 OSLO
Հեռ.: + 47 2 218 8100
Ֆաքս: + 47 2 218 8103
Էլ-փոստ: support@akademika.no
http://www.akademika.no

ԼԵՀԱՍՏԱՆ/POLOGNE
Ars Polona JSC
25 Obroncow Street
PL-03-933 WARSZAWA
Հեռ.: + 48 (0)22 509 86 00
Ֆաքս: + 48 (0)22 509 86 10
Էլ-փոստ: arspolona@arspolona.com.pl
http://www.arspolona.com.pl

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ/PORTUGAL
Marka Lda
Rua dos Correeiros 61-3
PT-1100-162 LISBOA
Tel: 351 21 3224040
Ֆաքս: 351 21 3224044
E mail: apoio.clientes@marka.pt
www.marka.pt

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ/
FÉDÉRATION DE RUSSIE
Ves Mir
17b, Butlerova ul. - Office 338
RU-117342 MOSCOW
Հեռ.: + 7 495 739 0971
Ֆաքս: + 7 495 739 0971
Էլ-փոստ: orders@vesmirbooks.ru
http://www.vesmirbooks.ru

ՇՎԵՑԱՐԻԱ/SUISSE
Planetis Sàrl
16, chemin des Pins
CH-1273 ARZIER
Հեռ.: + 41 22 366 51 77
Ֆաքս: + 41 22 366 51 78
Էլ-փոստ: info@planetis.ch

ԹԱՅՎԱՆ/TAIWAN
Tycoon Information Inc.
5th Floor, No. 500, Chang-Chun Road
Taipei, Taiwan
Հեռ.: 886-2-8712 8886
Ֆաքս: 886-2-8712 4747, 8712 4777
Էլ-փոստ: info@tycoon-info.com.tw
orders@tycoon-info.com.tw

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ/
ROYAUME-UNI
The Stationery Office Ltd
PO Box 29
GB-NORWICH NR3 1GN
Հեռ.: + 44 (0)870 600 5522
Ֆաքս: + 44 (0)870 600 5533
Էլ-փոստ: book.enquiries@tso.co.uk
http://www.tsoshop.co.uk

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԵՎ ԿԱՆԱԴԱ/
ÉTATS-UNIS et CANADA
Manhattan Publishing Co
670 White Plains Road
USA-10583 SCARSDALE, NY
Tel: + 1 914 472 4650
Ֆաքս: + 1 914 472 4316
Էլ-փոստ: coe@manhat-
tanpublishing.com
http://www.manhattanpublishing.com

Եվրոպայի խորհրդի հրատարակչություն / Éditions du Conseil de l'Europe
F-67075 STRASBOURG Cedex

Հեռ.: + 33 (0)3 88 41 25 81 – Ֆաքս: + 33 (0)3 88 41 39 10 –
Էլ-փոստ: publishing@coe.int – Վեբ-կայք: http://book.coe.int

Ըստ Եվրոպայի խորհրդի լանդշաֆտի կոնվենցիայի կանխանշման՝ վերջինիս կողմերը պարտավորվում են խթանել իրենց համապատասխան առարկաների շրջանակում ընդգրկված լանդշաֆտի՝ վերջինիս պաշտպանության, կառավարման և պլանավորման միջոցով բարձրաձայնված արժեքայնությանը և խնդիրներին վերաբերող դպրոցական դասընթացների դասավանդումը:

«Լանդշաֆտի վերաբերյալ կրթական գործողություններ տարրական դպրոցների համար» վերնագիրը կրող սույն մանկավարժական գրքույկը միտված է լանդշաֆտի հանդեպ աշակերտների հետաքրքրասիրության և հետաքրքրվածության արթնացմանը՝ վերջիններիս մտորելու տեղիք ընձեռելով՝ ինչ են իրենք հասկանում «լանդշաֆտ» ասելով, ինչպես նաև ժամանակի և տարածության մեջ սույն գաղափարը դիտարկելով բնապահպանական, սոցիալական, մշակութային և տնտեսական ձևաչափերով (հարթության մեջ):

Սույն գործողությունները կարող են առաջնորդել աշակերտներին պատկերացնելու վերջիններիս դերը՝ իբրև որպես անհատներ կամ հասարակության անդամներ՝ լանդշաֆտի ոլորտում ակտիվորեն ներգրավվելու նպատակով:

Սույն գործողությունները կարող են իրականացվել պաշտոնական և ոչ պաշտոնական կրթության շրջանակներում:

PREMS 035821

HYE

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

www.coe.int

http://book.coe.int
ISBN 978-92-871-8828-1
8,50 € / 17 $US

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE